

բեր դադարաբան ունենին նախնիք, արդէն կանոնաբան: Տիգրանայ Մեծի իսկ արքունիքը լի էր յոյն արուեստագէտներով, որոնց հովանաւորողն էր իւր կինը՝ Կղէնպատրա, Միհրապատայ Մեծի դուստրը, եւ իւր արքունիքն ապրող Մետրոդոր Սկեպտացին էր որ Տիգրանայ պատմութիւնը գրած կ'աւանդուի (Ստրաբոն, ԺԳ, ա, 55 էւն): Եւ Տիգրանակերտի մէջ յունական թատերախումբ մը ներկայացումներ կու տար (Պղոտարքոս, Լուկ. 29), եւ նոյն ինքն թագաժառանգ եւ ապագայ արքայն Արտաւազդ անուանի մատենագիր իսկ էր (Պղոտարքոս, Կրատոս, 33), բայց յունարէն, ո՛չ «յունատառ»: Բայց պէտք է կա՞յ արդեօք շարունակելու. Արտաւազդ ի հարկէ ասոր համար յոյն էր եւ չեղաւ, բայց նաեւ Ս. Գրիգորի օրով Սերաստիա եւն քանի մը նաեւ շատ՝ հայագէտ գտնուելուն — եթէ ընդունինք անգամ այսպէս ըլլալը — չի հետեւիր թէ ամբողջ «Փոքր-Հայք»՝ այսինքն իրականին Գամիւրք ու Պոնտոս՝ Հայ էին եւ հայախօս: — Սակայն մոռցանք փաստ մ'ալ. «Եւստրատիոսեանց պատմութեան մէջ կը գրուի որ Սերաստիոյ Ս. Վլաս եպիսկոպոսը հայերէն կը խօսէր Ս. Եւստրատիոսի հետ, յոյն կամ հոյժմայեցի դասճէն ծածկելու համար իրենց խօսակցութեան նիւթը»: Թէ Ս. Բղասիոս («Վլաս») ազգաւ հայ էր թէ ոչ՝ ինչիւր մըն է որ հոս նշանակութիւն չունի<sup>3</sup>: Բայց Ս. Եւստրատիոսի եւ ընկերաց վկայաբանութիւնը՝ որ կ'ակնարկուի (տես անդ, Բ., 435—475), կը յիշէ այնպիսի բան մը. սակայն ամբողջը կը վերաբերի իրական Փոքր-Հայոց: Դատարարութիւնն ալ տեղի կ'ունենայ նախ «ի Սատաղացեոց քաղաքին», ուր էր «գուքս Լիւսիաս»՝ իբր հրամանատար, մինչդեռ քաղաքական վարիչն էր «Ագրիկոպոսու դատաւորն ի մայրաքաղաքն Սերաստացեոց» (— այս ժամանակ ո՛չ իրօք «մայրաքաղաք», բայց արդէն իրաւունքով այս տիտղոսի՝ Կոզոմիենայ համար, բուն մայրաքաղաքն էր Նէոկեսարիա. տես Կիւմոն, «Պոնտ. Ուսումն», Բ., § 16, Անդերսոն, անդ, Ա., § 16 էւն. բայց այս վարքերը արդէն շատ ուշ խմբագրուած են): Եւստրատիոս նշանաւոր տոհմէ է՝ բայց հայ («Արարակացեոց քաղաքն եմ ես ազգաւ եւ տոհմիւ»): Գինուորական ծառայութեան մէջ մտած կանուխէն («գեքսկեպոտորոսի պէտս լնոյր»՝ exceptor),

<sup>3</sup> Համառոտ վկայաբանութիւնը տես «Վարք եւ վկայք», Վենետիկ 1874, Ա., 382—389:

յետոյ շատ բարձրացած («իշխան» էւն). եւ «ի դասուց բզեշխին Լիւսիասայ» եւ բնականապէս «իբրու զի հայրենի հեղինակամ իմաստութեամբ լցեալ» էւն: Դատար կ'ըլլայ Սատաղա՝ «ի Թէատրոնն». յետոյ կու գան «ի Նիկոպոլսեցեոց քաղաքն», եւ անկէ «հասանէր յետ երկուց աւուրց եւ բանակէր մերձ առ դղեկին որ է հուպ ի քաղաքն Արաւրակացեոց»: Հոս «Մարգարիոս ոմն ուսմիկ»՝ երբ «ծածկէր զձեզունս տանն» կը տեսնէ վկայքն որ կապեալ կ'անցնէին «ընդ պողոտայն որ էր մերձ ի գետին յայն», կը ճանչնայ զԵւստրատիոս եւ կ'աճապարէ «եւ ասէ ցկինն իւր զրուցատրութեամբ ի բարբառ հայերէն. Ո՛վ կին, տեսանե՞ս զտէրն մեր Եւստրատիոս՝ անուանեալ Կիւրիւկոս, զիշխանն ամենայն շրջաբնակութեանս մերոյ» էւն. եւ ինքն ալ կը հետեւի եւ վկայակից կ'ըլլայ, իւր տունը յանձնելով նոյն դիւղէ «մեծատան, որ էր այր երեւելի... որում անուն էր Մուսատարիոս» եւ «ազգակից» Եւստրատիոսի: Դուքսը նորէն կու գայ Նիկոպոլս. հոն «բազումք ի զօրականաց յայնմ զնդէ՝ որ ի քաղաքին էին» կը յայտնեն թէ իրենք ալ քրիստոնեայ են: Դուքս կը վախճայ ապստամբութենէ մը («ոչ միայն որ քրիստոնեայքն են... այլ եւ զՀելլենացիս ապստամբեցուցանէ» էւն) եւ կը խաւրէ Ագրիկոպոսի «ի քաղաքն Սերաստացեոց»: Ծամբան կ'անցնի «մերձ ի ձորակ անդր, զոր մեք Լեռնատն անուանեմք», եւ հինգ օրէ կու գան Սերաստիա: Հոս նախ կը վկայէ Ս. Ովրեստէս, եւ «արք քաղաքին Սերաստիոյ հանդերձ կանամքք եւ սրբուովք ժողովեալ էին ի տեսիլ սրբոցն»: Հոս բանտին մէջ Ս. Եւստրատիոս կը գրէ իւր կտակը, կը տրամադրէ որ սրբոց նշխարքը տարուին «յԱրաւրակացեոց քաղաքն եւ դնել յայցելում տեղու՞ր որ կոչի Բոսոսա», իւր «զհայրենի ստացուածս նորա որ յԱրաւրակացիսն էր» բաժնել ազքատաց եւ մէկ մասը «քերց իւրոց» էւն: Բանտի մէջ կը տեսնէ «գեպիսկոպոս քաղաքին Սերաստիու», անոր կը յանձնէ կտակը էւն: Վերջապէս կը վկայէ հոն, եւ «զկական բարձեալ... լային եւ ամենայն Հելլենացեոց բազմութիւնսն հանդերձ քաղաքացեօքն» էւն: Եւ «եպիսկոպոս քաղաքին» որում անուն էր Պետրոս» կ'առնու սրբոց նշխարքը եւ կը տանի «ի հայրենի գաւառն իւրեանց յԱրաւրակացեոց քաղաքին» էւն: Իսկ Արաւրակայ եկեղեցեոց քահանայն է Ալեքսանտրոս: — Ա՛յս է հայ բնակիրը. շատ

պէսպէս են վարուց խմբագրութիւնք, եւ կան որ Ս. Բղասիոս ալ կ'ըսեն: Դժբախտաբար չունինք հոս առձեռն յոյն բնագիրքը՝ տեսնելու թէ կա՞յ իրօք եպիսկոպոսին ու Եւստրատիոս հայերէն՝ իբրեւ ծածուկ՝ խօսելու պարագան: Շատ ալ չի յարմարիր ըստ ինքեան, որովհետեւ եպիսկոպոսը «եկն ի ծածուկ ի դիւերի ի բանտ անդր, տուեալ ինչս պահապանացն». ուստի դիւերը նաեւ ուրիշներ կու գան («ի պատշաճաւոր պաշտօնէից բերեալ լինէր խորհուրդն սրբութեան» էւն): Եւ կասկածի տեղի կայ անկէ որ նման բան մը կը պատմուի ուրիշ Վարքի մը մէջ:

(Շարունակելի:)



**ԳԻՈՆԵՍԻՈՍ ԲԵՐՍԵԼԻՅԻՍ  
ՀԵՆՆԻՍԻՍ ԻՍԻՊՈՒՆԻՆԵՆԸ ՀԵՅՈՑ ԳԷՄ**

(Շարունակութիւն:)

Գ.ՈՒՆ Զ.

Հայոց սովորութիւններու դէմ:

Դարձեալ խայտառակներ անոնց տղիտութիւնը որ հրէական սովորութիւններու ետեւէն կ'անձկայ: Մեծ Հայքի գաւառանբուն մէջ Պասեքի տօնին գառնուկ կը զոհեն եւ անոր արիւնը կը սրսկեն սեամքին ու մուտքին, եւ երբ յանդիմանեն դիւերնք՝ կը պատասխանեն թէ մենք Աստուծոյ մեր զոհը կը զոհենք: Սակայն լաւ է անոնց սորվեցնել որ նաեւ հին Օրէնքին մէջ զոհերը խոտելի էին. վասն զի Աստուած կ'ըսէ Դաւթի ձեռքով. «Չուարակներու միւր չեմ ուտեր եւ նոխարներու արիւնը չեմ խմեր»<sup>1</sup>. եւ «որովհետեւ պատարագ չուղեցիր եւ ողջակէզներու չհաճեցար»<sup>2</sup>. Երեմիա՝ «Չեր ողջակէզները ընդունելի չեն, եւ ձեր զոհերը ինձ քաղցր չեն»<sup>3</sup>: Իսկ Միքէ՝ «Չի հաճիր Տէրը հազարաւոր խոյերու եւ պատարագներու. ցուցուցաւ քեզի, մարդ, թէ ի՞նչ կ'ուզէ Տէրը քեզմէ՝ արդարութիւն ընել եւ սիրել ողորմութիւն»<sup>4</sup>:

<sup>1</sup> Սաղմ. ԽԹ., 13. ստոր. 50, 13:  
<sup>2</sup> Սաղմ. Ծ., 18. ստոր. 50, 16. թէ կամեցեալ էր պատարագս մատուցանէաք էւն:  
<sup>3</sup> Երեմ. Զ., 20:  
<sup>4</sup> Միքէ. Զ., 7, 8. Եթէ իցէ՝ ընկալցի՞ր Տէր զհազարաւորս խոյոց կամ ընդ բնութեանս նոխարաց պարեալ:

Սամուէլ՝ «Ահա լսելը լաւագոյն է քան զօհը, եւ հնազանդիլ լաւագոյն քան խոյերու ճարպը»<sup>5</sup>. Եսայի՝ «Այն որ եղ կը զոհէ՝ իբր թէ մարդ սպաննէր, այն որ գառնուկ կը զոհէ՝ իբր թէ շուն սատկեցուցած ըլլար. նաչիհ կը մատուցանէ իբր թէ խոյի արիւն ըլլար. խունկ կ'ընծայէ՝ իբր թէ կուռքերու երկրպագութիւն ընէր»<sup>6</sup>:

Եթէ հին օրէնքին մէջ զոհերը խոտելի էին՝ որչափ աւելի նորին մէջ: Կ'ըսէ Պողոս թէ «մեր Պասեքը Մեսիան է, որ զոհուեցաւ մեր փոխարէն»<sup>7</sup>. Եւ Երրայեցեոց (Թղթին) մէջ կը գրէ. «Հիմայ դարերու կատարածին՝ անգամ մը զոհեց իւր անձը մեզի համար պատարագով էւն»<sup>8</sup>. մէկ անգամ միայն զոհուեցաւ անոնց համար որ իրմով յաւիտեան պիտի սրբանային<sup>9</sup>: Իսկ մեր Տէրը ըսաւ. «Գացէք սորվեցէք թէ ի՞նչ կը նշանակէ ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ»<sup>10</sup>:

Կիւրեղ Եսայեայ Մեկնութեան մէջ (կ'ըսէ). «Մէկ զոհ ընջեց Դեւին ու անոր քահանայութիւնը»<sup>11</sup>: Աստուածաբանը Պասեքի ճառին մէջ՝ «Աստուծոյ ոչ մատաղ երինջ, ոչ նորարոյս եղջիւններով գառնեք զոհեցէք, այլ զօհնացողութեան զոհեր»<sup>12</sup>: Եւ Կարկուտի Հարուածի մասին ճառին մէջ՝ «Եւ ոչ ողջակէզներով ու զոհերով պիտի դարձնէիր բարկութիւնը եւ անոնց ողորմէիր»: Յովհաննէս Ծաղկաղարդի ճառին մէջ՝ «Օրհնեալ է այն որ եկաւ Տիրոջ անուամբ խաչափայտին վրայ զոհուելու եւ ոչնչացնելու բոլոր զոհերը»<sup>13</sup>: Իսկ Մատնութեան ճառին մէջ կ'ըսէ՝ «Գառնուկը խորհրդապատկերն էր միւս հոգեւոր գառնին, եւ առաջին ոչխարը՝ շուքը ճշմարիտներուն. Արդարութեան արեւը ծագելէն ետք շուքն անհետացաւ»<sup>14</sup>: Յովհաննէս կ'ըսէ. «Ահա Գառնը, որ աշխարհիս մեղքերը կը բառնայ»<sup>15</sup>. Եւ Պողոս՝ «Իր անձով մեր մեղքերը սրբեց»<sup>16</sup>:

բարտաց էւն. ասոր՝ չի հաճիր Տէր հազար խոյերու, նաեւ ոչ բիւր պարարտ նոխարներու էւն:  
<sup>5</sup> Ա. Թադ. ԺԵ., 22:  
<sup>6</sup> Ես. ԿԶ., 3:  
<sup>7</sup> Ա. Կորնթ. Ե., 7. քանզի գառնիկ մեր գինաւ Բրիտանոս: Պեղիտ. նոյն Բարսաղիբի հետ:  
<sup>8</sup> Եբր. Թ., 26:  
<sup>9</sup> Եբր. Թ., 28:  
<sup>10</sup> Մատթ. Թ., 13:  
<sup>11</sup> Patr. Gr. LXX., III, 909.  
<sup>12</sup> Patr. Gr. XXXVI., II, 656.  
<sup>13</sup> Հիմառ. Patr. Gr., LIX, VIII, 706—708:  
<sup>14</sup> Patr. Gr. XLIX., II., 379.  
<sup>15</sup> Յովհ. Ա., 29:  
<sup>16</sup> Եբր. Ա., 3. սրբութիւն մեղաց մերոց արարեալ:

Արդ դուք ինչո՞ւ Հրեաներուն պէս գառնուկ զօհելու վրայ կը մնաք. գառնուկի զօհը արտրթելի չէ Մեսիայի դալին ետք, որ ջնջեց գառնուկ զօհելը: Մովսէս ըսաւ. «Անթրիատը որ գառնուկի զօհէն կ'ուտէ՝ մերժուի ժողովուրդէն<sup>17</sup>»:

Անոնք դեռ ուրիշ բան մըն ալ կը կատարեն. երբ կ'ուզեն մատաղ զօհել՝ աղը աղօթքներով ու ալէլուիաներով կ'օրհնեն, կարծես անով զօհը սրբացնէին: Անոնց դէմ կ'ըսենք. աղին սրբութիւնը արեան հետ այնպէս կապուած է ինչպէս Մեսիային մարմինն ու արիւնը Անոր հոգւոյն հետ: Որովհետեւ անասնոյն արիւնը անոր հոգին է՝ ի՞նչպէս թոյլ կու տաք շուներու ուտել աղին սրբութիւնը, որ անոր արեան կապուած է: Նախ ձեր քահանաները պէտք է մասնակցին զօհերուն եւ ոչ շուները: Մովսէս առանց աղն օրհնելու՝ արիւնը ժողովրդեան վրայ կը սրսկէր, եւ դուք օրհնեալ աղը կը թողուք որ շուներն ուտեն եւ Մեսիայի մարմնոյն զօհը առանց աղի կը կատարէք. եզան ու գառնուկի զօհերը աղով կ'օրհնէք եւ կ'ուտէք. եւ այն մեծ զօհը, որ աշխարհի անհամութիւնը մաքրեց՝ առանց աղի կը կատարէք, մինչ ոչխարներու եւ գառնուկներու զօհը աղով կը պատուէք: Եթէ շուն մը եկեղեցի մտնէ, կ'ըսեն թէ պղծուեցաւ ու միւսոնը կորսուեցաւ, եւ ահա անոնց եպիսկոպոսներէն առաջ՝ շուները կը մասնակցին արիւնը լցելով: Մովսէս առանց աղին վրայ աղօթելու՝ արիւնը ժողովրդեան վրայ կը սրսկէր, որպէս զի մեղքերէն սրբուի. իսկ դուք ձեր լեզուն կը կտորէք աղին վրայ աղօթելով եւ թոյլ կու տաք շուներուն լակել արիւնը, որուն կապուած է աղը:

Բայց կը հարցնեն հայերը. ո՞վ իշխանութիւն տուաւ ձեզի պղծուած իր մը, որուն մէջ մուկ ինկած է, օրհնելու:

Անոնց կը պատասխանենք. իսկ ձեզի ո՞վ տուաւ ձեր իշխանութիւնը փոքրիկ պարզելով մեղքի պղծութիւնը մաքրելու եւ թողլու: Աւելի դերազանց եւ բարձր է մարմնաւոր օրհնութիւնը հոգեւորէն<sup>18</sup>, ինչպէս որ հոգին մարմնէն աւելի բարձր է: Մեր Տէրը կ'ըսէ. «Ամէն բան որ արձակէք աշխարհի վրայ, ար-

<sup>17</sup> Հմմտ. եւր. թ. 48:

<sup>18</sup> Այսպէս ձեռագիրը, անտարակոյս գրչին անուաղրութեան հետեւանքով:

ձակուած ըլլայ երկինքը<sup>19</sup>»: Ամէն բան ընդհանուր է. ոչինչ դուրս կը թողու. եւ եթէ դուք չէք կրնար մուկերու պղծութիւնը մաքրել՝ չունինք իշխանութիւն ամէն բանի, ուրեմն Աստուծոյ դէմ կը կանգնիք, որ «ամէն բան» ըսաւ, իսկ դուք ոմանց «այո», ոմանց «ոչ» կ'ըսէք:

«Պղծուած ամանը (պէտք է) կոտրի եւ անոր մէջիւնը քափուի, եւ եթէ մէկը պղծուած է ուտէ՝ առանց գիտնալու, մեղք չէ» (կ'ըսեն Հայերը): Անոնց կը պատասխանենք. Յանցանք չունին հեթանոսները, վասն զի առանց գիտութեան կը մեղանչեն, նաեւ խաչահանուները, վասն զի չէին գիտեր թէ Որդին կը խաչեն: Բայց (այս խօսքերը) փրփուր են եւ պառաւանց դանդաշանք. այն որ առանց գիտութեան պղծուեցաւ՝ պէտք է երթայ քահանային, որ ջուր օրհնէ եւ խմցնէ:

Բայց ուրիշ ծիծաղելի բան մըն ալ կ'ըսեն. ոսկեղէն, արծաթեղէն. պղնձեղէն կամ երկաթեղէն իրերը, որ պղծուած են՝ կրակով կը մաքրեն, եւ կաւեղէնները կը կոտրեն: Եթէ կրակը կը սրբէ ու կ'օրհնէ՝ անով սրբեցէք ամէն բան, նաեւ գինին, մեղրը եւ իւզը անով տաքցուցէք որպէս զի սրբուի պղծութիւնը: Թանկազին իրերը կրակով կը սրբեն, իսկ անարժէքներն ու կաւեղէնները կը կոտրեն. աւելի մեծ սրբազործում կը վերադրեն կրակի զօրութեան քան իրենց քահանաներուն: Մոլորակները կը քամեն եւ ուղտերը կը կլլեն<sup>20</sup>. մարմնական մաքրութեան հոգ կը տանին եւ արտաքին պղծութենէ (կը զգուշանան), բայց իրենց ներքին մեղքերը չեն սրբեր: Չկայ ոյժ մը, որ կարենայ սրբել ներքին ու արտաքին պղծութիւնը, ինչպէս այն ոյժը, զոր Աստուած քահանայութեան տուաւ: Դարձեալ կ'ըսենք թէ պղծութիւնը տեսանելի բան մը չէ, եւ ո՛չ հուրը, ո՛չ ջուրը կը մաքրէ զայն, վասն զի սատանան, որ չի տեսնուիր, պղծութիւն ու մեղք կը դործէ եւ կ'ուսուցանէ մարդուն:

Դարձեալ ըսէք մեզի. մուկը որո՞ւն ստեղծածն է: Եթէ ըսէք՝ «չարին», այն ատեն մանիքեցի էք. անոնք եւս երկու էակ կը խոստովանին, մին բարիներու ստեղծիչ, միւսը՝ չարերու: Եւ եթէ խոստովանիք թէ մուկն Աստուծոյ արարածն է, ինչպէս որ ճշմարիտ է, եւ թէ ամէն ինչ, զոր Աստուած

<sup>19</sup> Մատթ. թ. 18:

<sup>20</sup> Մատթ. ի. 24:

ստեղծեց բարի է եւ դեղեցիկ, ինչպէս կ'ըսէ Մովսէս, դուք ի՞նչպէս կը վճռէք թէ ան պիղծ է: Մսի եւ մտքի, կամ մարմնոյ եւ հոգւոյ պղծութիւնը կը խոտէ Տէրը՝ պոռնկութիւն, սպանութիւն եւ զոգութիւն, բայց ոչ մկան աղտոգութիւնը: Եւ ի՞նչպէս հոգւոյ աղտոգութիւնը, որ ամէնէն մեծն է, կը սրբէք եւ ձեր քահանաները անգոր են ու չեն կրնար մկան պղծութիւնը մաքրել:

Դարձեալ ըսէք մեզի թէ մկան պղծութիւնը անոր բնութենէ՞ն թէ աղատ (կամքէն) է: Եթէ ըսէք թէ բնութենէն է՝ Մովսէս կը հերքէ զձեզ երբ կը գրէ, որ Աստուծոյ ստեղծած ամէն ինչ լաւ եւ դեղեցիկ է: Եւ եթէ առարկէք թէ աղատութենէն է, աղատութիւնը հրեշտակներուն եւ մարդիկներուն տրուեցաւ եւ ոչ՝ անասուններուն կամ մուկերուն: Ուր աղատութիւն կայ՝ հոն կրնայ գտնուիլ սրբութիւն եւ պղծութիւն. եւ եթէ քահանան (մեղքով) պղծուած աղատութիւնը կրնայ սրբել, ո՞ւր դրուած է թէ մուկը կը մեղանչէ, որ քահանան չկարենայ այն բանն ուր ինկած է՝ օրհնել: Պատշաճ է ցուցնել թէ մենք ու ուսուցիչ ընդունեցանք պղծուած բաներն օրհնելու (սովորութիւնը). Պօղոս առ Տիմոթէոս թղթին մէջ կ'ըսէ. «Աստուած ինչ որ ստեղծեց՝ դեղեցիկ է, եւ չկայ բան մը որ աղտոտ ըլլայ, երբ հաւատքով ընդունուի, վասն զի կը սրբանայ Աստուծոյ զօրութեամբ ու աղօթքով<sup>21</sup>»: Ահա ասկից ընդունած ենք ամէն բան, որոնց մէջ մուկ խղճուած է, օրհնելու սովորութիւնը: Հոովմայեցեաց թղթին մէջ կ'ըսէ. «Ուստի զիտեմ եւ համոզուած եմ ի Տէր Յիսուս, որ չկայ ինքն իրմէ պիղծ բան, բայց միայն երբ մարդ բան մը պիղծ կը համարի՝ անոր համար միայն պիղծ է»<sup>22</sup>: Եւ առ Տիմոս թղթին մէջ կը գրէ. «Ամէն ինչ սուրբ է սուրբին, բայց պիղծերուն եւ անհաւատներուն չկայ սուրբ բան. նաեւ անոնց միտքն ու խիղճը աղտոտ է. կը հուշակեն թէ զԱստուած կը ճանչնան բայց իրենց զործերով կ'ուրանան զայն<sup>23</sup>»: Կորնթացեաց թղթին մէջ կ'ըսէ. «Եթէ հեթանոս մը կանչէ զձեզ եւ ուզէք երթալ<sup>24</sup>, ինչ որ ձեր առջեւ կը

դնեն՝ առանց խղճի հարց դնելու կերէք<sup>25</sup>»: Եւ մեր Տէրն ըսաւ. «Ոչ թէ բերնէն ներս մտնողը կը պղծէ մարդը, այլ ինչ որ անկէ կ'ելլէ<sup>26</sup>»: Եւ սուրբ մար Յովհաննէս Տիմոթէոսի Ա. թղթին Մեկնութեան ԺԲ. ճառին մէջ այսպէս (կ'ըսէ). «Եթէ Աստուծոյ ստեղծածն է՝ դեղեցիկ է. «վասն զի ամէն ինչ շատ դեղեցիկ է<sup>27</sup>»:

արդ Աստուծոյ ստեղծածն ըսելով՝ բոլոր ուտելիքները (կ'իմանայ), որովհետեւ նախ հերքեց անոնց հերետիկները, որոնք անստեղծ հիւլէ մը կը ներմուծեն եւ անոր կը վերադրեն զասոնք: Բայց եթէ ամէն ինչ բարի է (ի՞նչ կը նշանակէ) այն ատեն թէ «կը սրբուի Աստուծոյ Բանովն ու աղօթքով<sup>28</sup>»:

յայտնի է թէ պիղծը կը սրբուի: Սակայն անոնց համար կ'ըսէ, որոնք կը համարին թէ ինքն իրմէ պիղծ բաներ կան: Երկու կէտ դրաւ. նախ՝ չկայ արարչութեամբ պիղծ բան մը, եւ երկրորդ՝ եթէ ըլլայ պիղծ բան մը, ունինք նաեւ միջոց՝ խաչակնքել, խոստովանութիւն, գովարանութիւն Աստուծոյ եւ ամէն պղծութիւն կը փախչի<sup>29</sup>»: Այս ցուցմունքէն պէտք է ամենաք դուք, վասն զի կ'ըսէ՝ երբ բան մը պղծուի՝ միջոց կամ դեղ ունիք. խաչակնքել, աղօթք, օրհնութիւն, եւ ամէն պղծութիւն կ'անհետանայ: Եւ զայս ցուցուցինք հոս:

Գլ. ՈՒՆ Է.  
Ընդդէմ Հայոց \*:

Ունին դարձեալ գէշ, նոյն իսկ սատանայական սովորութիւն մը, որ դաւանանք ձգող ու իրենց միացողները կրկին կը մկրտեն: Նախկին Հայերը մեզի չաւանդեցին հերետիկոսութենէ դարձողները կրկին մկրտել. բայց միայն զանոնք որ Արիոսի, Սարգիսոսի, Մակեդոնի եւ Պօղոս Սամոսատացւոյն աղանդէն կը դառնան հրամայեցին վերստին մկրտել, իսկ Փոտինոսի<sup>1</sup> հերետիկներէն դարձողները միայն դրոշմել միւսոնով. Նեստորի, Քաղկեդոնականներու եւ Յուլիանոս Երեւութականի աղանդէն մեզի եկողները չպատուիրեցին

<sup>25</sup> Ա. Կորնթ. Ժ., 27:

<sup>26</sup> Մատթ. ԺԵ., 11:

<sup>27</sup> Կորնթ. Ա., 31:

<sup>28</sup> Ա. Տիմ. Դ., 4. գրուած լիճճճճ կարգալիճճճճ:

<sup>29</sup> Patr. Gr. LXII., XI., 559.

\* Լուսանցապրութիւն մը ստորեւ կ'ըսէ. «Թէ Հայերը կը մկրտեն իրենց միացողները՝ Քաղկեդոնականներուն պէս»:

<sup>1</sup> Գրչի հարուածով աւրուած են «Քաղկեդոնականներու եւ Յուլիանոս Երեւութականի» բառերը, որոնք սակայն քիչ ետք կը յիշուին:

<sup>21</sup> Ա. Տիմ. Դ., 4. եւ չիք ինչ խոտան, մանաւանդ որ զօհութեամբ ընդունիցին, զի սրբի բանին Աստուծոյ եւ աղօթքի:

<sup>22</sup> Հոովմ. ԺԳ., 14. զի ոչինչ է նովաւ (ստոր. անոր քով):

<sup>23</sup> Տիմ. Ա., 16. խոստովանի գիտել զԱստուած. ուղղել խոստովանիմ, պղպկս յայնն ու ստորին:

<sup>24</sup> Միկանոս գուրս կը թողու նախադասութիւնս, էջ 36:

մկրտել կամ դրոշմել, այլ միայն՝ որ անոնք պիտի ուրանան այն վարդապետութիւնը, որմէ կը դառնան, եւ պիտի տան մեր հաւատքին միանալու թողութ, եւ եպիսկոպոսի աղօթքին հետ միաժամանակ կ'ընդունուին եւ երկու տարի լրացնելէն ետք մեզի հետ կը հաղորդուին: Քաղկեդոնականներու դէմ հակաճառութեան եւ ընդդիմագրութեան մէջ ասոնց մասին երկար գրեցինք. անոնք ուղիղ կարգէն չեղած են, ինչպէս որ հեղեղը հանգիւպածը կը քշէ, նոյնպէս եւ ասոնք իրենց միացողները նորէն կը մկրտեն:

Մինչ Մովսէս իւր ու ձէթ գործածեց եւ Հին (Կտակարանի) Հայերը անուշահոտ իւղեր կը գործածէին, եւ մեր վարդապետները բաղասամոն իւր ու ձէթ կը կիրարկեն, ասոնք ասոնց պատշաճութեան եւ պատուէրի՝ շուքայի իւր կը գործածեն: Եւ երբ քրիստոնէութեան ընդհանրութենէն պախարակուեցան թէ լքած են ձիթաիւղը, որ Հին ու Նոր Կտակարաններու մէջ կը գովուի, չքմեղեցին իրենք զիրենք ըսելով թէ «Հայաստան ձիթաիւղ չի գտնուիր, վասն զի երկիրը պաղ է եւ ձիթենի չ'աճիր»: Այդ պատճառաւ իրենց միւստը շուքայի իւղէ կը շինեն: Սակայն եթէ Հայաստան ձիթենի չկայ, նէոկեսարիա՝ Կապադովկիոյ կողմերը կը գտնուի ձիթենի, որ Հայաստանի մօտ է: Չեղմէ ոմանք բռնեցին Սիւրիա. ինչու հոն ձեր եպիսկոպոսները ձէթ չեն գործածեր: Մենք Ասորիներս Մելիտենէ եւ հիւսիսային կողմ՝ մենք ալ չունինք ձիթաիւղ կամ ապրամ, որ երկարուսէ կու գայ. սակայն մենք խնամքով բերել կու տանք, եւ Գրոշմի խորհուրդը կատարած ժամանակ կը գործածենք: Ըսէք մեզի. Մեսիան հրահանգեց աշակերտներուն. «Մկրտեցէք բոլոր ժողովուրդները յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն սրբոյ»<sup>2</sup>. արդ եթէ դուք մեզի պէս Երրորդութեան կը դաւանիք, անգամ մը Երրորդութեան (անուամբ) մկրտուածները ինչու դարձեալ կը մկրտէք. եւ այդ ուսկից ընդունած էք: Եթէ ըսեն՝ «Առաքեալներէն». ահա Պօղոս (որ կը գոչէ). «Մէկ է Տէրը, մէկ հաւատք, մէկ մկրտութիւն»<sup>3</sup>: Եթէ յաւելուն թէ՛ «Հայրերէն». ահա Նիկիոյ ժողովքը մէկ մկրտութեան կը հաւանի: Մկրտութիւնը Մեսիայի մահուան եւ երեքօրեայ թաղման խորհրդանշանն է. եւ երեք անգամ ընկղմումը կամ երեք անգամ սրսկումը Քրիստոսի գե-

<sup>2</sup> Մատթ. ԻԸ., 19:  
<sup>3</sup> Եփես. Գ., 15:

րեզմանի մէջ երեք օրերը կը խորհրդանշէ, ինչպէս կ'ըսէ Պօղոս. «Մեսիայի (անուամբ) մկրտողներս անոր մահուամբ մկրտուեցանք ու միաժամանակ թաղուեցանք մկրտութեամբ»<sup>4</sup>: Եւ կը կոչուի երկրորդ ծնունդ, վասն զի կը մաքրէ զմեզ իբր թէ նորէն ծնանէինք: Մկրտութիւնը մէկ է, վասն զի կը խորհրդանշէ մահը. ինչպէս որ յառնողներն ու վերակենդանացողները դարձեալ չեն մեռնիր, նոյնպէս նաեւ չկայ երկրորդ մկրտութիւն: Ուստի ճշմարտութեան դէմ կը կանդնիք երբ Երրորդութեան (անուամբ) եւ Մեսիայի մահով մկրտուածները դարձեալ կը մկրտէք:

Ուրիշ դէպ սովորութիւն մըն ալ ունին. իրենց եկեղեցւոյ մէջ մարդու թոյլ չեն տար քնանալ, ոչ հիւանդի, ոչ առողջի. նաեւ կղաքիս<sup>5</sup> կամ կատու պիտի չմտնէ հոն՝ մաքրութեան համար: Անոնց կը պատասխանենք. Քրիստոս ինչ կրեց իւր ուսերուն վրայ, մա՞րդ թէ քարէ եկեղեցի<sup>6</sup>. Եթէ մարդ կրեց՝ ինչպէս եկեղեցիէն դուրս կը վտարէք զայն՝ զոր Քրիստոս իւր ուսերուն վրայ կրեց: Եկեղեցին հաւատացեալներու ժողովն է եւ ոչ քարը կամ շէնքը: Այս յայտնի է անկէ որ գրուած է «ողջունեցէք եկեղեցին», որ ձեր տան մէջ է<sup>7</sup>: Հոս եկեղեցի կ'անուանէ այրերու եւ կիներու ժողովը եւ ոչ շէնքը: Գարձեալ մեր Տէրը կ'ըսէ աւաղակաց ձեռք ինկողի մասին, թէ դրաւ զայն իւր գրաստին վրայ, տարաւ պանդոկ, յանձնեց պանդոկապետին: Ծանօթ է Սուրբ Գիորգ կարդացողին թէ պանդոկը եկեղեցին կը նշանակէ, եւ պանդոկապետը՝ քահանան, եւ վերաւորը, որ աւաղակներու ձեռքն ինկաւ՝ Աղամբ, իսկ Սամարացին՝ Մեսիան: Հիմա ելէք Քրիստոսի դէմ ու ըսէք թէ՛ «Ինչու վերաւորը եկեղեցի բերի. դուրսը թողուի զայն»: Բայց ինչպէս որ պանդոկը ամէնքը կ'ընդունի, բարի թէ չար. այդպէս եկեղեցին ամէնուն ժողովարանն է: Ո՞ր մայրը իւր որդիները կը մերժէ: Գարձեալ եթէ կատուի կ'արգիլէք եկեղեցի մտնել, մկան որ պիղծ է ինչու չէք արգիլել:

Ուրիշ բանի մէջ ալ կը սխալին. աշխարհ-

<sup>4</sup> Հոովմ. 2., 3, 4:  
<sup>5</sup> ?<sup>Λαοδα</sup> mustela, կղաքիս. Մինգանա դուրս կը թողու բառս, էջ 38:  
<sup>6</sup> Աննաբիութիւն մը թերեւս Ղուկ. ԺԵ., 5 եւն:  
<sup>7</sup> Կող. Գ., 15. Ողջուն տալիք եղբարց, որ են ի Լաւողիկեայ եւ Նիսիոյ, եւ որ ասանին եկեղեցին է նորա:

հականներու չեն թոյլատրեր աւետարանները կարգալ: Ըսէք մեզի ո՞ւսկից սորվեցաք զայդ: Եթէ աշխարհականները ժողովրդեան գլուխը աւետարան կարգան՝ պատշաճ չէ, բայց թէ տան մէջ հաւատացեալը կը կարգայ զայն, յօգուտ անձին, դուք ինչու զայն այսպէս բարիքէ մը կը զրկէք: Այդ սովորութիւնը սատանան սորվեցուցած է, որպէս զի կենդանի խօսքերէն՝ տկար ժողովրդեան օրուտ չըլլայ: Մեր Տէրը մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ կերաւ, եւ դուք Անոր խօսքերը կ'արգիլէք աշխարհականներուն: Ահա մեղաւոր կիներ անոր գլուխը կ'օծէ եւ ստերուն կը մերձենայ, իսկ դուք (Անոր) խօսքերը հաւատացեալներէն կը թաղուցանէք, ուստի Անոր հակառակ էք: Բայց լսեցէք Մար Յովհաննէսին, որ Մատթէի Մեկնութեան Բ. ճառին մէջ ձեզի դէմ կը խօսի ու կը թոյլատրէ աշխարհականներուն աւետարանները կարգալ: Երբ աշխարհիկ մը ջատագովեց ինքզինք ըսելով «չեմ կարդար սուրբ Գիորգ, վասն զի կնոջ ու տղաքներու բռն ունիմ վրաս», վարդապետը յանդիմանեց զայն ու պատասխանեց. «Երբ մերձենաս ձեռքդ առնել Աւետարանը, եթէ նախ չլուսաս ձեռքերդ ու յետոյ բռնես՝ խօսքերու զօրութիւնը արհամարհած պիտի ըլլաս»<sup>8</sup>:

Բայց ասկից աւելի դէպ բանի մէջ կը մեղանչեն. կ'ուսուցանեն թէ հաւատացեալք «Հայր մեր որ յերկինս ես» աղօթքը, որ միայն քահանայից պատշաճ է, պէտք չէ ըսեն: Անոնց կը պատասխանենք թէ աշխարհականները այն ատեն պէտք չեն մկրտուիլ: Այդ աղօթքը դարձաբար է. այն որ կը մկրտուի՝ մկրտութեամբ կ'ըլլայ Հօր որդի եւ եղբայր Քրիստոսի, ուստի կը պարտաւորի «Հայր մեր որ յերկինս» աղօթել: Եթէ որդի չէ՝ զԱստուած Հայր չի կոչեր. այդպէս հեթանոսներն ու հրեաները չեն կրնար «Հայր մեր որ յերկինս» աղօթել, վասն զի մկրտութիւն չեն ընդունած: Սակայն դուք այս (սովորութիւնն) եւս ընդունած էք սատանայէն, որ դատնացաւ եւ տանջուեցաւ երբ քրիստոնեաները այսպիսի մեծ պատուոյ բարձրացած տեսաւ: Լսեցէք ինչ կ'ըսէ մար Յովհաննէս Հոռմայեցւոյ (Թղթի) մեկնութեան ԺԳ. ճառին մէջ. «Ինչպէս թէ զԱստուած՝ Հայր չեն կո-

<sup>8</sup> Մատթ. Մեկն. Ա., 28. չեմ, ասէ, վանական, այլ կին ունիմ եւ որդիս եւ տան հոգամ... քանզի եթէ աւետարան հասանիցէ ի ձեռս անուոյ, անյուստ ձեռք չկամիս հուպ լինել, եւ որ ի ներքս աղտոգորութիւնքն մթերեալ կան, զայն չհամարիս ինչ կարեւոր:

չած. չե՞ս լսեր Մովսէսի որ կ'ըսէ՝ զՔեզ ծնող Աստուածը թողուցիր<sup>9</sup>: Չե՞ս մտիկ ընել Մաղաքիայի, որ կը գոչէ՝ Մի է զքեզ ստեղծող Աստուածը, մի է ձեր ամէնուն Հայրը<sup>10</sup>: Մենք ամէնքս՝ քահանայ, աշխարհիկ թէ ստրուկ այդպէս պատուէր ստացանք աղօթել, եւ այդ անունը բացականչել՝ զարմանալի երկունքէն եւ հրաշալի ծնունդէն ետք<sup>11</sup>:

Անոնց քով կը գտնուի նաեւ ուրիշ հեթանոսական սովորութիւն մը. հաւատացեալներուն կ'արգիլեն երկար տարիներ Պորհուրդին մերձենալ, եւ այդ պատճառաւ անոնց հաւատացեալները չեն դադարի մեղանչելէ. եւ դեւը՝ Պորհուրդի պաշտպանութենէ զուրկ դանելով զիրենք՝ կու գայ իւր զիւական սատարներով կը շարշարէ եւ կը մոլեղանցնէ: Իսկ մենք (սուրբ) Գրքի (խօսքերու) զօրութեան հետեւելով կ'ըսենք թէ քրիստոնեան պէտք չէ խախտել Պորհուրդին. բայց նաեւ երբ անարժան է՝ պէտք չէ մերձենայ: Կը պատասխանեն թէ՛ Մենք մշտապէս արժանի չենք հաղորդուելու: Եթէ այսօր արժանի չէք՝ ցուցուցէք թէ երբ կ'ըլլաք արժանի, վասն զի որչափ կ'ապրինք՝ մեզք կը յաւելունք: Չկայ սուրբ մարդ, եթէ մէկ ժամ ալ ապրած ըլլայ ան: Արեւն ու աստղերը սուրբ չեն Անոր աչքին առջեւ: Պօղոս «աղտ»<sup>12</sup> կ'անուանէ ինք զինքը. Դաւիթ՝ որդ, եւ Աբրահամ՝ հող: Բայց ինչպէս որ մարմինը առանց հացի չի կրնար ապրիլ, նոյնպէս եւ հողին՝ առանց Պորհուրդի. եւ ինչպէս որ չզրուած թողութը անարդ է, եւ երբ թաղաւորական վճիռ մը գրուի՝ թաղաւորի հրովարտակ կ'անուանուի, նոյնպէս նաեւ երբ մարդ Պորհուրդը կ'ընդունի՝ Քրիստոս թաղաւորի բնակարան կը կոչուի: Եւ ինչպէս որ մկրտողը՝ Հօր որդի կ'անուանուի, նոյնպէս եւ այն, որ Պորհուրդը կ'ընդունի՝ կը հաղորդակցի Մեսիային հետ. եւ ինչպէս զինն կը ծծէ, նոյնպէս եւ հաղորդուող մարդը սուրբ Պորհուրդէն սրբութիւն եւ կեանք կը ծծէ:

Եւ թէ Պորհուրդը պաշտպան է հաւատացեալներուն՝ կ'ուսուցանէ Կիւրեղ՝ Յովհաննու Մեկնութեան Բ. գլխին մէջ. «Մի ապշիք ստոր վրայ, եւ մի հարցնէք դուք ձեզ հրեայօրէն թէ «Ինչպէս»... մանաւանդ թէ հասկցէք

<sup>9</sup> Երկր. Գ., ԼԲ., 18:  
<sup>10</sup> Մաղ. Բ., 10:  
<sup>11</sup> Patr. Gr. LX., IX. 527.  
<sup>12</sup> Ա. Կորնթ. Գ., 13. ասակ նշաւակի. յայնն եւ ասոր.՝ պղտ:

որ ինչպէս ջուրը բնութեամբ պող ըլլալով երբ կուժի<sup>13</sup> մէջ գրուի եւ կրակի բռնուի՝ ոչ միայն իւր բնութիւնը կը կորսնցնէ, այլ եւ զինքը զսպող ծաւալն ալ կը յաղթահարէ, նոյնպէս եւ մենք, որ թէեւ սպաւանացու ենք մարմնեղէն բնութեան պատճառաւ, բայց Խորհուրդի հաղորդութեամբ մեր տկարութիւնը կը թողունք եւ առաւելագոյն կեանքի կը դառնանք<sup>14</sup>»։ Իսկ մար Յովհաննէս Երրայեցեաց (Թղթի) Մեկնութեան Ը. ճառին մէջ կ'ըսէ. «Շատերը այս զոհին տարին մէկ անգամ կը մասնակցին, ոմանք՝ երկու, ուրիշներ՝ սոէպ: Արդ անոնց բոլորին կ'ուզեմ խօսքս. սակայն ո՞րը դուժեմ. զանո՞նք որ մէկ անգամ, թէ զանոնք որ սոէպ կամ զանոնք որ ցանցաւ անգամ (կը մերձենան): Բայց ո՞չ մէկ անգամ, ո՞չ սոէպ, ո՞չ ցանցաւ, այլ մաքուր խղճով, մաքուր սրտով եւ անպարսաւ վարքով (մերձեցողները). անոնք որ այսպէս են՝ միշտ մերձենան<sup>15</sup>»:

Սակայն (Հայերը) կը սայթաքին կ'իջնան ուրիշ փոսի մէջ, այնու որ խաչերն ու ժամհարները կը մկրտեն<sup>16</sup>: Այդպիսի բան չկայ սուրբ Գրքին մէջ: Քրիստոս ըսաւ Առաքեալներուն. «Գացէք աշակերտեցէք բոլոր ժողովուրդները եւ մկրտեցէք Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ անունով<sup>17</sup>»։ Եւ այս մկրտութեան նշանով կը տարբերինք հեթանոսներէն: Պօզոս կ'ըսէ. «Դուք որ ի Քրիստոս մկրտուած էք, Քրիստոս զգեցած էք<sup>18</sup>»։ ուրեմն խաչերն ու ժամհարները Քրիստոս զգեցած են. այդ խոտան է ճշմարտութեան: «Ով որ ջրէն ու Հոգիէն չի ծնանիր՝ Արքայութիւն չի մտնէր<sup>19</sup>»։ ուրեմն մկրտուող խաչերն ու ժամհարները կը պատրաստուին Արքայութիւն մտնելու. այդ հեռու է ճշմարտութենէ: Մկրտութեամբ որդեգրուեցանք, որով կը զոչենք «Արքա, մեր Հայրը<sup>20</sup>» ուստի խաչերն ու ժամհարները, զոր կը մկրտէք՝ Հօր որդի կանուանէք. քաւ լիցի: Մկրտութեամբ Մեսիայի եղբայր եղանք. ուստի մկրտուած խաչերն ու

ժամհարները Քրիստոսի եղբայր են. ո՞վ կրնայ ընդունիլ զայդ: Սաչը Եկեղեցւոյ խորհուրդները կը կատարէ, եւ եթէ պակասաւոր ըլլայ՝ խաչ չըլլար. բայց խաչը խաչին բան չ'աւելցնէր, ինչպէս Եպիսկոպոս Եպիսկոպոսի կամ քահանայ քահանայի, վասն զի երկնային (իշխանութեան) մէջ իրարու հաւասար են: Ինչպէս որ խաչին դամուած մէկ մարմնով՝ Եկեղեցւոյ մէջ բոլոր պատարագները սրբուեցան, նոյնպէս նաեւ Գողգոթա հաստատուած մէկ խաչով նուիրագործուեցան բոլոր խաչերը, եւ պէտք չունին մկրտութեան կամ միւսոնի օժման: Քառասուն նահատակներու ճառին մէջ այսպէս կ'ըսէ Բարսեղ. «Պատկերին տրուած պատիւը՝ նախատիպին կ'երթայ<sup>21</sup>»։ ուստի խաչաւիպտին, որ է նախատիպը, (տրուած) պատիւը կը տարածուի բոլոր խաչերու վրայ եւ մկրտութեան պէտք չկայ: Եթէ խաչը մկրտութեան պէտք ունենար՝ նաեւ պատկերները, նկարները եւ աւետարանները պէտք էր մկրտել:

Ինչպէս որ Մովսէս պնակները ու սափորները կը մկրտէր, նոյնպէս եւ Հայերը խաչերն ու ժամհարները (կը մկրտեն), եւ այդ անկենդան իրերու՝ իրը կենդանիներու՝ անուն կը դնեն: Հեթանոսներն Աստուծոյ անունով կը պատուեն պատկերներն ու քանդակները. իսկ Հայերը՝ սուրբերու անունը կը դրոշմեն խաչերու վրայ:

Եւ կը հարցնեն. «Դուք ի՞նչու տաճարները կը նուիրագործէք (կ'օծէք), եւ խաչերը չէք (օծեր)»: Անոնց կը պատասխանենք. ամէն բան որ նախատիպ ունի՝ պատկեր կ'անուանուի. Եկեղեցիները եւ խորանները որովհետեւ նախատիպ չունին՝ կը նուիրագործուին (կ'օծուին) եւ իրենք իրենց կ'ըլլան նախատիպ. խաչը սակայն վասն զի առաջին նախատիպ ունի՝ պատկեր կը կոչուի, եւ պէտք չէ նուիրագործել (օծել) զայն, ինչպէս նաեւ սուրբերու պատկերներն ու աւետարանները: Երբ կը համբուրենք<sup>22</sup> խաչը կամ սուրբերու պատկերը՝ մտքով Մեսիային կամ անոր դամուած խաչին կը համբառնանք եւ զայն կը համբուրենք. երբ պատկեր կը համբուրենք՝ կը բարձրանանք սուրբին եւ հօգուով զայն կը համբուրենք: Մաղաղաթ-

<sup>13</sup> Ձեռագիրը Խօսք առա, հայ. «կուժ» բառին ընդ. Միկայան կը թարգմանէ ըստ, էջ 41:  
<sup>14</sup> Patr. Gr. LXXIII, VI., 580.  
<sup>15</sup> Patr. Gr. LXIII, XII., 131.  
<sup>16</sup> Բարսեղի այս հաստատումը իր փաստերով կը բաղէ Բար-Շուշանի նամակէն, էջ 54-57 (Թրգմ. Հ. Ս. Վարդանան). տես Գիրք Թղթոց, էջ 345-346:  
<sup>17</sup> Մատթ. ԻԸ., 19:  
<sup>18</sup> Գաղ. Գ., 27:  
<sup>19</sup> Յովհ. Գ., 3:  
<sup>20</sup> Հոովմ. Ը., 15:

<sup>21</sup> Patr. Gr. XXXI., III., 510.  
<sup>22</sup> Ձեռագիրը սխալ. ուղիղ կը սրբազրէ Միսկան, էջ 43:

ներու երկրպագութիւն չենք ընէր, ուր աւետարանները զրուած են, այլ անոնց վրայ զրուած Աստուծոյ խօսքերուն: Բանադրանքի արժանի են անոնք որ խաչերը կը մկրտեն, ու այս կամ այն սուրբի անունով կը կոչեն զանոնք. մենք՝ սակայն խաչը Մեսիային կը ճանչնանք եւ զինքը զիտենք որ բարձրացաւ խաչաւիպտին վրայ եւ յաւիտեանս ուրիշի անունը պիտի չդնենք անոր վրայ: Եւ այս այսչափ:

(Շարունակելի): Զ. Պ. ԼՍԱՊԱԼԵԱՆ



ԵՐԿՈՒ ՆՈՐ ՁԵԹԵԳՐԵՐ. ՀԵԼԷՊԻ ՄԷՋ

Քանի մը որ յառաջ հայերէն երկու նոր ձեռագիր երեւան եկան Հայէպի մէջ: Ձեռագիրները տնական զոյքերու կամ զարդեղէններու կը նմանին. կը կորսուին, երկար ատեն անյայտ կը մնան ու օր մըն ալ յանկարծ երեւան կու գան, աւետարանական բացատրութեամբ ուրախութիւն պատճառելով տանուտիրոջ: Քաղաքիս Ամբրիկեան Վարժարանի Մատենադարանին մէջ հայերէն ձեռագրաց փոքրիկ հաւաքում մը կար. Վարժարանը հոս փոխադրուած էր՝ իր ձեռագիր ու սպաղիւր հաւաքումներովը: Աստուծոյ 19 կտոր ձեռագրեր եւ քններ ու ցանկեր էի իմ Հայէպեան ձեռագրաց ճուղակիս Բ. հատորին մէջ (էջ 74): Ձիս սպասուէր էին որ զպրօցին մէջ աստուծոյ զուրս ուրիշ ձեռագիր չկայ: Գպրոցական ներկայ վերամուտին երբ ուսուցիչ ու ուսանող սկսան դարձեալ զեղբերիլ զբաղարաններու առջեւ, անկիւն մը փոքրիկ ծրար մը դտան, բացին. ուրկէ զուրս ելան երկու կտոր ձեռագրեր: Ասոնք իրենց յիշատակարաններուն շահեկանութեանը տեսակետով շատ թանկագին են: Առաջինը կիսաւեր շարական մըն է ու անունը ինծի համար նորութիւն եղող «առաջարան» մը: Ես, որքան որ կարելի էր աչքէ անցուցի, անգամ մըն ալ, ձեռագրաց տպեալ ցուցակները, զորս ունէի, ու չհանդիպեցայ բառիս: Յուցակներէ զուրս եւս հանդիպած չեմ այս բառին: Ձեռագիրս փոքրագիր է, բայց շատ սիրուն ու մանր գրով մը լիցուած: Գրուած է 1270ին Սեպուհ լերան Ս. Լուսաւորիչ մայ-

վանքին շուրջ՝ Կապոս անապատին մէջ: Ձեռագրաց ծանօթ բոլոր հաւաքմանց մէջ վիեննայի Մատենադարանը ունի միայն նոյնպէս Շարակնոց մը, Կապոսի անապատին մէջ գրուած 1343ին<sup>1</sup>: Բայց ըստ այլ յիշատակագրութեանց՝ վանքս, որ կը կարծուի կոչուած ըլլալ նաեւ Կայիփոսի վանք<sup>2</sup>, ԺԳ.—ԺԶ. դարերուն եղած է ծաղկեալ անապատ, ուր գրչութիւն եւ մանրանկարչութիւն բաւական յառաջացած են՝ Կոստանդին, Սարգիս եւ Վարդան Առաջնորդաց հսկողութեան տակ<sup>3</sup>: Վանքիս պատմութիւնը վերակազմելու տեսակէտով կարեւոր է ուրեմն Ձեռագրիս յիշատակարանը:

1.  
**Շ Ա Ր Ա Կ Ն Ո Յ — Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն**  
 Հին Թիւ՝ չունի:  
 ՁԺԹ = 1270:

Թիւրք.՝ պժմ 237: — Մեծնիթիւն՝ 11 X 8 X 4.5 սնդմ.: — Գրնիթիւն՝ միասին՝ 8 1/2 X 5 սնդմ.: — ՏՈՂ.Ք՝ 18: — ԹԵՐԹ.Ք՝ նշանակուած կը գտնենք 24, իւրաքանչիւրը 12 բուրբ, բայց շատ քերի ու անկանոն: — Նիիթ՝ ողորկ, սպիտակ ու նուրբ բուրբ: — ԿԱՉՄ՝ փայտեայ կաշեպատ, կողքերուն վրայ տաղանմանով: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՉՊԱՆԱԿՔ՝ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ վնասուած գործածութեանէ եւ հնուքներէ. կողքին սկիզբներ ինկած յաջորդ 3 1/2 քերքերով, գրեթէ 36 բուրբ, որով մտնանս կը սկսի — Ո՞ր անպակաս մարմնով ծընար ի սուրբ կուսէն, խանձարուրքս պատեցար, արկազգ զայս... [Կանոն վերափոխման Բ. աւուր. Ող. Բ. համար]: Կազմը ամբողջովին քայքայուած ու քիկուեցր բացուած: Ներքին քերքերէն ոմանք կարէն հեռացած ու քիչ քիւով քուրքեր ինկած ու կարուած: — ԳԻՐ՝ սեւ ընտիր մեղանով մանուրտիկ շատ յաջող բարդիք, տպագրի նմանողութեամբ, ծայրէ ծայր միեւնոյն գրէն: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ ամէն կանոնի սկիզբը, բաց սրճագոյն, փոքրագիր. համարագրութեանը առ հասարակ սեւի ու կարմրագիր խոնուրդ եւ, երկարագրի նմանութեամբ: — ԵՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր, առ հասարակ երկտող, բարդիք: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ ամէն կանոնի սկիզբը, բաց սրճագոյն, սովորական մարիվներով: — ԵՈՐԱՆՔ՝ չկան, քերես կային ինկած քուրքերուն վրայ: — ՆԿԱՐՔ՝ ու ՄԱՆՐԱՆԿԱՐՔ՝ կը պակսին: — ԳՐԻԶ՝ Յակովբոս կրօնաւոր: — ՍՏԱՅՈՂ՝ Յովհաննէս կրօնաւոր: — ՏԵՂ.Ք՝ թի լեռն Ս. Լուսաւորչին ի յանապատիս որ կոչի Կապոս. ընդ հոգնանա Ս. Յակոբայ եւ Ս. Սիովնի: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԶԺԹ (+ 551) = 1270: — ԾԱՂԿՈՂ եւ ԿԱՉՄՈՂ՝ Արիստակէս գպիր: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ ձեռագիրս մաս կը կազմէ Այնթապու եւ ներկայիս Հայէպի Ամբրիկեան վարժարանի հայերէն ձեռագրաց հաւաքմանց:

<sup>1</sup> Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց, էջ 489:  
<sup>2</sup> Բնաշխարհիկ Բառարան, էջ 275ր:  
<sup>3</sup> Տաթև Տարեցոյց, 1927, էջ 185: